# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**24.06.2026թ**

## Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**2026 թվականի հունիսի 7-ի ՀՀ Ազգային Ժողովի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների**

Ազգային Ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող բոլոր սուբյեկտները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բացել են նախընտրական հիմնադրամներ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ առաջին հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և կնքված պայմանագրերը:

Այն բանկերը, որտեղ բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացրել են տեղեկանքներ նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ:

Համադրելով առևտրային բանկերից ստացված տեղեկանքները, սուբյեկտներից ստացված հայտարարագրերի հետ, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ***փ ա ս տ ու մ է***, որ.

Բոլոր սուբյեկտների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

**Կենտրոնական ընտրական հանձնաժողովի**

**վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար՝** **Տ.Բաբիկյան**